ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի հունվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար ամսվա ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3072.0 մլն դրամ՝ պլանավորված 3000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2.4 տոկոսով կամ 72.0 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 3.3 տոկոսով կամ 96.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 156 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 2 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 13 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 10.0 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 5 ստուգում՝ 3.6 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 4, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 3, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման ու վարձու աշխատողների չձևակերպման 1-ական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 58 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 53-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 3-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 2 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 10 վարչական գործ՝ 30.1 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 1 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 5.4 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 60 վարչական գործով սահմանվել է 0.7 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 11172 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 9175:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 73 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 120 վարձու աշխատողի՝ 19.1 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 38 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է ««Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման մասին» հրամանը և փոփոխություններ կատարվել «Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների» ձևերում:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև համագործակցության ծրագրի շրջանակում հաշվետու ամսում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հաշվետու ամսում կայացել է ԱՀ ֆինանսների նախարարի մամուլի ասուլիսը, որի ընթացքում նախարարն ամփոփել է նախորդ տարվա տնտեսական զարգացումների և հարկաբյուջետային քաղաքականության արդյունքներն ու ներկայացրել առաջիկայում ծրագրվող աշխատանքները:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել են առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել 1 հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 171, ելքագրվել՝ 85 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն, որից 4-ը՝ «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով: